ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ք. Երևան «12» նոյեմբերի 2020թ.

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ-ն (այսուհետ՝ ինստիտուտ), ի դեմս տնօրեն Լիլիթ Ղազանչյանի, մի կողմից և «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտորի ԺՊ Երվանդ Սերոբյանի՝ մյուս կողմից (միասին՝ Կողմեր), կազմեցին սույն համագործակցության հուշագիրը բարձրագույն մասնագիտական կրթության բնագավառում գիտակրթական համագործակցության զարգացման վերաբերյալ:

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Կողմերը համաձայնվեցին համագործակցել հետևյալ ուղղություններով.

- Ուսումնական և գիտահետազոտական ոլորտներում համատեղ ծրագրերի իրականացում, բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների համատեղ պատրաստում,
- գիտակրթական և գիտագործնական սեմինարների, քննարկումների, բանավեճերի թեմատիկ դասախոսությունների, կլոր-սեղան հանդիպումների, գիտաժողովների և այլ միջոցառումների համատեղ կազմակերպում,
- ակադեմիայի գիտաշխատողների կողմից համալսարանի ուսանողների ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի ղեկավարում և գրախոսում,
- դասախոսների վերապատրաստում և փորձի փոխանակում,
- դասախոսների, ասպիրանտների, հայցորդների գիտահետազոտական աշխատանքների գրախոսության իրականացում,
- ուսանողների պրակտիկաների կազմակերպում և ղեկավարում,
- համատեղ գիտական հետազոտությունների անցկացում և արդյունքների հրապարակում,
- դասական և էլեկտրոնային գրադարանային ռեսուրսների համատեղ օգտագործում:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2.2 Սույն հուշագրի գործողությունը կարող է դադարել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ այդ մտադրության մասին առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացնելով մյուս կողմին:

2.3 Հուշագրի պայմաններին համապատասխան՝ Կողմերը կարող են կնքել համագործակցության պայմանագիր, որը կարող է նախատեսել հուշագրում նշված պայմաններին ու պահանջներին չհակասող այլ պայմաններ:

2.4 Հուշագրի ցանկացած փոփոխություն կամ լրացում կատարվում է Կողմերի գրավոր համաձայնությամբ:

2.5 Հուշագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ «Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ» ՊՈԱԿ ՀՀ, ք. Երևան, 0010, Արամի 44,	«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ ՀՀ, ք. Գյումրի, 3126, Պ.Սևակի 4,
Տնօրեն՝ Լ. Ղազանչյան	Ռեկտորի ԺՊ՝ Ե. Սերոբյան
Կ.Տ.	Կ.Տ.